# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Գ. Շիրակամուտ

N°—Ե -03/186

«27» 09. 2019թ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Ներկայացնում եմ Շիրակամուտ համայնքի ավագանու թիվ 26-Ա, 27-Ա , 28-Ա և 29-Ա որոշումները:

Առդիր 4 էջ :

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

## ՈՐՈՇՈՒՄ

,, 20'' սեպտեմբերի 2019 թվականի N26-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Շիրակամուտ համայնքի ավագանու 2019թ. սեպտեմբերի 20-ի հերթական նիստի օրակարգը

ՕՐԱԿԱՐԳ

1. 06-087-0062-0011 ծածկագրի տակ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ընդլայնման նպատակով Գագիկ Կառլենի Նասլյանին ուղղակի վաճառքով օտարելուն համաձայնություն տալու մասին
2. Ուսման վարձ հատկացնելու մասին:
3. Շիրակամուտ համայնքի ավագանու 2019թ.ապրիլի 18-ի ,,Շիրակամուտ համայքում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին'' թիվ 11-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ/4 / | դեմ /0 / | ձեռնպահ/ 0 / |
|---|---|---|---|
| Ն.Նասլյան | | | |
| Հ.Մազմանյան | | | |
| Ա.Պապոյան | | | |
| Հ.Նալբանդյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ

,, 20" սեպտեմբերի 2019 թվականի N 27-Ա

06-087-0062-0011 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԱԳԻԿ ԿԱՌԼԵՆԻ ՆԱՍԼՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 63-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 26.05.2016թ-ի թիվ 550-Ն որոշման 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Շիրակամուտ համայնքի բնակիչ քաղաքացի Գագիկ Կառլենի Նասլյանի հողամասն ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով գնելու մասին դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 13092019-06-0054 վկայականը, համայնքապետարանի գլխավոր մասնագետ Հ.Իգիթխանյանի առաջարկությունը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընդլայնվող հողամասն օտարվում է հասարակական կառուցապատման նպատակով և հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել հրապարակային սակարկությունների միջոցով, ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Շիրակամուտ համայնքի Վանաձորյան խճուղի , թիվ 28Ա փոստային հասցեում գտնվող, Գագիկ Կառլենի Նասլյանին սեփականության իրավունքով պատկանող առևտրի սրահ սպասարկման համար զբաղեցրած 0.03022 հա մակերեսով հասարակական կառուցապատման հողամասին կից Վանաձորյան խճուղի թիվ 28/1 փոստային հասցեում գտնվող 06-087-0062-0011 ծածկագրով 0.02552 հա մակերեսով բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասն ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով 56654,0 / հիսուն վեց հազար վեց հարյուր հիսունչորս / ՀՀ դրամ կադաստրային արժեքով Գագիկ Կառլենի Նասլյանին օտարելու համար:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ/4 / | դեմ /0 / | ձեռնպահ/ 0 / |
|---|---|---|---|
| Հ.Մազմանյան | | | |
| Ն.Նասլյան | | | |
| Ա.Պապոյան | | | |
| Հ.Նալբանդյան | | | |
| | | | |

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
,,20 ''սեպտեմբերի 2019 թվականի N28-Ա

ՈՒՍՄԱՆ ՎԱՐԶ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

,,Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 17-ի ,,Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին'' թիվ 16-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով Գալինա Արմենի Սերոբյանից և Աննա Միհերի Սանթրոսյանից ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները ,Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

1.Շիրակամուտ համայնքի բյուջեի 09.4.1 դասակարգման 4729 հոդվածից՝ ,,Բարձրագույն մասնագիտական կրթություն՛՛, 2019-2020թ.թ. ուս. տարվա 1-ին կիսամյակի ուսման վարձ փոխանցել ,,Երևանի Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան ՛՛ 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ՝ Գալինա Արմենի Սերոբյանի համար և ,,Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան ՛՛ 50000/հիսուն հազար/ ՀՀ դրամ՝ Աննա Միհերի Սանթրոսյանի համար:

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ/4 / | դեմ /0 / | ձեռնպահ/ 0 / |
|---|---|---|---|
| Հ.Մազմանյան | | | |
| Ն.Նասլյան | | | |
| Ա.Պապոյան | | | |
| Հ.Նալբանդյան | | | |
| | | | |

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ

,,20 ''սեպտեմբերի 2019 թվականի N29-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019Թ.ԱՊՐԻԼԻ 18-Ի ,,ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՔՈՒՄ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 11-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Շիրակամուտ համայնքի ավագանու անդամ Հասմիկ Մազմանյանի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է
1.Շիրակամուտ համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 18-ի ,,Շիրակամուտ համայնքում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին'' թիվ 11-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն.
1) որոշման մեջ նշված հանձնաժողովի անդամ ,,Սիրանուշ Արշակունի-հիմնական դպրոցի ուսուցչուհի'' բառերը փոխարինել ,,Սեդա Մելքոնյան –թիվ 1 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի բառերով

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ/3 / | դեմ /1 / | ձեռնպահ/ 0 / |
|---|---|---|---|
| Հ.Մազմանյան | | | |
| Ն.Նասլյան | | | |
| Ա.Պապոյան | | | |
| Հ.Նալբանդյան | | | |
| | | | |

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան